ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ, ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Ազգային-պետական շինարարության պրոբլեմը և ապագա սոցիալիստական Ռուսաստանի պետական կառուցվածքի ձևի որոշումը Վ. Ի. Լենինին և կոմունիստական կուսակցությանը զբաղեցնում էին դեռ նախքան Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը։ Հոկտեմբերից հետո այդ պրոբլեմի տեսական ասպեկտը զուգակցվեց սովետական պետական շինարարության պրակտիկ իրականացման հետ։ Կառավարող կուսակցություն դարձած կոմունիստական կուսակցության առջև ամբողջ հասակով կանգնեց աշխարհում առաջին սոցիալիստական երկրի պետականության առավել նպատակահարմար ձևի որոշման և իրականացման խնդիրը։ Հայտնի է, որ որոնումներից ու կարծիքների պայքարից հետո այդպիսի ձև ճանաչվեց սովետական ֆեդերացիան։ Սոցիալիստական պետության ֆեդերատիվ կառուցվածքը Վ. Ի. Լենինը համարում էր ամենաճիշտ քայլը՝ «Ռուսաստանի զանազան ազգություններին մեկ միասնական դեմոկրատական կենտրոնացված սովետական պետության մեջ ամենաամուր կերպով համախմբելու համար»[1]։

Սովետահայ պատմագիտությունն անհրաժեշտ ուշադրություն է դարձրել ազգային-պետական շինարարության պատմության պրոբլեմների լուսաբանմանը։ Ըստ որում, հիմնականում հետազոտվել են հետևյալ հարցերը. «Թուրքահայաստանի մասին» Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի դեկրետը և նրա նշանակությունը, հայկական սովետական պետականության ձևավորումը, ազգային հարցի լուծումը և ազգային խաղաղության հաստատումը Անդրկովկասում, Անդրֆեդերացիայի և ՍՍՀ Միության կազմավորումը, սովետների գործունեությունը և այլն։

«Թուրքահայաստանի մասին» Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի դեկրետը ազգային-պետական շինարարության մասին սովետական կառավարության ընդունած ամենաառաջին ակտերից է։ Ելնելով կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության հիմնական սկզբունքից՝ ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումից, դեկրետը նախատեսում էր իրագործել մի շարք միջոցառումներ, որոնք կոչված էին ապահովելու «Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»։ Այդ միջոցառումներից կարևորագույններն էին. «Տարբեր երկրներում ցրված գաղթական-հայերի, ինչպես նաև վտարանդի հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները» և «պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի սահմանները»[2]։ Այսպիսով, սովետական կառավարությունը հանդես էր գալիս Արևմտյան Հայաստանը նրա իսկական բնակչությանը՝ հայերին, վերադարձնելու օգտին, որոնք, ինչպես հայտնի է, Թուրքիայում հայերի գենոցիդի իրագործման տարիներին թուրքական

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 186։

2 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Երևան, 1960, էջ 156—157։

ջարդարարների կողմից բռնությամբ տեղահան էին արվել։ Իր հայրենիքը վերադարձած հայ բնակչությունը պետք է իրագործեր ազատ ինքնորոշման իր իրավունքը, ընդհուպ մինչև լիակատար անկախություն։ Միանգամայն ակնհայտ է, որ 1917 թ. դեկտեմբերին ընդունված սովետական կառավարության այդ դեկրետը կենսագործման դեպքում կարևորագույն քայլ կհանդիսանար Հայկական հարցի լուծման ճանապարհին, հարց, որն արդեն մի քանի տասնամյակ հուզում էր հայ ժողովրդին։ «Թուրքահայաստանի մասին» Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետի դեկրետի նշանակության հենց նման գնահատականն է ընդհանուր ճանաչում գտել սովետահայ պատմագիտության մեջ և միանգամայն օրինաչափ է, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատման համար պայքարի պատմության ուսումնասիրությամբ զբաղված բոլոր հետազոտողները նշում են այդ փաստաթղթի հսկայական պատմական նշանակությունը։

«Թուրքահայաստանի մասին» դեկրետի մշակման պատմությունը և նրա հետ կապված որոշ հարցեր առավել հանգամանորեն լուսաբանված են Ս. Ալիխանյանի, Մ. Արզումանյանի, Ա. Մնացականյանի և Լ. Խուրշուդյանի աշխատություններում[3]։ Դրանցում քննվող հարցերի համալիրից առանձնացնենք երկուսը. 1. ո՞վ է մասնակցել դեկրետի մշակմանը, 2. սովետական կառավարությունն այն ժամանակ ինչպե՞ս էր պատկերացնում Հայաստանի ապագան։

1925 թ. հրապարակվեց անցյալում հայկական գործերի գծով կոմիսարիատի առաջատար աշխատողներից մեկի՝ Պ. Մակինցյանի, «Լենինը և Հայկական հարցը» հոդվածը[4], որում ընդգծված էր, թե «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախապատրաստման հիմնական ծառայությունը պատկանում է հայկական գործերի գծով ժողկոմի տեղակալ Վ. Տերյանին։ Այդ սխեման ամուր հաստատվել էր սովետահայ պատմագիտության մեջ, որին, անկասկած, նպաստել էին նաև պահպանված նյութերն ու Վ. Տերյանի նամակները, որոնցում լուսաբանվում է դեկրետի նախապատրաստումը։ Դեռ 1920-ական թվականների վերջերին, անդրադառնալով Պ. Մակինցյանի հիշյալ հոդվածին, Բ. Բորյանը գրել է. «Մակինցյանը... նախագիծը վերագրում է ընկ. Տերյանին, միաժամանակ նշելով, որ հարցի նախնական մշակման փուլին մասնակցել է և ընկ. Լուկաշինը, բայց ընկ. Մակինցյանի կարծիքով փաստական անցկացնողը եղել է ընկ. Տերյանը։ Մեզ հայտնի է ուրիշ բան էլ։ Սակայն դեռ չի հասել այդ հարցի լուսաբանման պահը։ Բայց պետք է նշել, որ ընկ. Մակինցյանի պնդումը և ընկ. Տերյանի նամակը ո՞չ լրիվ են համապատասխանում իրականությանը. այդ հարցում հանգուցյալ Շահումյանը խաղացել է վճռական դեր»[5]։ Ինչպես նշել է Մ. Արզումանյանը, դեկրետի մշակման գործում Ս. Շահումյանի ակտիվ մասնակցությունը «զարմանալիորեն շրջանցվում է պատմական գրականության մեջ»[6]։ Այդ բացը լրացվել է Մ. Արզումանյանի և Լ. Խուրշուդյանի հետազոտություններում[7]։ Այդ հեղինակները գտնում են, որ «Թուրքահայաստանի մասին» դեկրետի մշակման ժամանակ սովետական

---

3 Ս. Ալիխանյան, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը, Երևան, 1958, նույնի՝ Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1964, Մ. Վ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, Ա. Ն. Մնացականյան, Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963, նույնի՝ Ленин и решение национального вопроса в СССР, Ереван, 1970, Լ. Ա. Խուրշուդյան, Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977։

4 Պ. Մակինցյան, Լենինը և Հայկական հարցը («Նորք», 1925, № 5—6)։

5 Б. А. Борян, Армения, международная дипломатия и СССР, ч. II, М.—Л., 1929, с. 260.

6 Մ. Վ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 37։

7 Նույն տեղում, էջ 37—40, Լ. Ա. Խուրշուդյան, նշվ. աշխ., էջ 22—39։

կառավարությունը, անձամբ Վ. Ի. Լենինը հաշվի են առել նշված հարցի մասին Ս. Շահումյանի կարծիքը։ Չնայած հետազոտողներն իրենց տրամադրության տակ չունեն այդ կարևոր փաստաթղթի մշակման ժամանակ Ս. Շահումյանի մասնակցությունն ուղղակիորեն վկայող փաստական տվյալներ, նրանց բերած փաստարկները համոզում են այն բանում, որ Արևմտյան Հայաստանի ճակատագրի հարցի մասին Ս. Շահումյանի տեսակետը դեկրետի մշակման ժամանակ հաշվի է առնվել։ Հայտնի է, որ դեռ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից առաջ Ս. Շահումյանը մի քանի անգամ շոշափել է Հայկական հարցը, ամեն անգամ արտահայտվելով արևմտահայերին իրենց ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու իրավունք տալու օգտին։ Այսպես, հանդես գալով Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարում (1917 թ. հոկտեմբերի 2—7) Ս. Շահումյանն առաջարկություն մտցրեց (որը դժբախտաբար համագումարը չընդունեց) կազմավորել Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի սովետական սոցիալիստական ինքնավարություններ։ Այդ առաջարկությունը նպատակ էր հետապնդում բուրժուական հիմքի վրա Անդրկովկասի ժողովուրդների պետականության վերականգնման ազգայնական կուսակցությունների պլանին հակադրել այդ ժողովուրդների սովետական պետականության ստեղծման պլանը։ Հենց այդ հույսով շոշափելով Արևմտյան Հայաստանի հարցը, Ս. Շահումյանը նշեց, որ «այդ հարցի լուծումը մենք պետք է թողնենք այդ մարզի բնակչությանը իրենց, որոնք իրենք պետք է որոշեն իրենց բախտը»[8]։ Ինչպես տեսնում ենք, այդ դրույթը մտավ «Թուրքահայաստանի մասին» դեկրետի մեջ։ Այնուհետև հայտնի է, որ 1917 թ. նոյեմբերին Ս. Շահումյանը Վ. Ի. Լենինին է ներկայացրել մանրամասն զեկուցագիր, որի մեջ ճշտորեն բնութագրված էր Կովկասի քաղաքական դրությունը և նշված էին երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների առջև կանգնած հիմնական խնդիրները։ Այդ զեկուցագիրը չի պահպանվել, բայց կարելի է ենթադրել, որ նրանում Ս. Շահումյանը կրկին շարադրել էր իր դիրքն Արևմտյան Հայաստանի հարցի մասին[9]։ Հարկ է հիշել և այն մասին, որ դեկրետի ընդունման պահին Ս. Շահումյանն արդեն նշանակվել էր Կովկասի գործերի արտակարգ կոմիսար։ Անկասկած, Կովկասի հետ անմիջական կապ ունեցող փաստաթուղթ նախապատրաստելով՝ սովետական կառավարությունը չէր կարող այդ հարցի մասին չխորհրդակցել իր արտակարգ կոմիսարի հետ։ Վերջապես, հենց դեկրետում նշվում էր, որ «Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարվում է ամեն տեսակի օգնություն ցույց տալ «Թուրքահայաստանի» բնակչությանը»՝ դեկրետի հիմնական կետերի իրականացման գործում[10]։ Հասկանալի է, որ վերը նշվածով բնավ չեն նսեմացվում դեկրետի նախապատրաստությանն անմիջականորեն մասնակցած, Վ. Ի. Լենինի ու ժողկոմսովետի ղեկավարության հետ քանիցս հանդիպած Վ. Տերյանի, Վ. Ավանեսովի, Ս. Լուկաշինի և մյուս բոլշևիկների ծառայությունները։ Հարկ է նշել, որ դեկրետի նախապատրաստությանը մասնակցել են ոչ միայն բոլշևիկները։ Ս. Ալիխանյանը ցույց է տվել, որ դեկրետը մշակող կառավարական հանձնաժողովում «ներկայացված էին նաև օպոզիցիոն կուսակցությունները»[11]։ Ա. Մնացականյանը նշել է այդ աշխատանքում ձախ էսէռների (Պ. Պոռշյան) և դաշնակցականների (Ս. Զորյան) մասնակցությունը[12]։ Դեկրետը նախա-

---

8 Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն, Երկեր, հ. 2, էջ 430։

9 Լ. Ա. Խ ո ւ ր շ ո ւ դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 36։

10 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 157։

11 Ս. Տ. Ա լ ի խ ա ն յ ա ն, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, էջ 35։

12 А. Н. Мнацаканян, նշվ. աշխ., էջ 116։

պատրաստող հանձնաժողովի գործունեությունն առավել հանգամանորեն լուսաբանել է Լ. Խուրշուդյանը։ Նա նշել է, որ 1917 թ. նոյեմբերին ժողկոմսովետի ստեղծած՝ դեկրետի նախագիծը կազմող հանձնաժողովի մեջ էին մտել կոմունիստներ Վ. Ավանեսովը, Վ. Տերյանը, Ս. Լուկաշինը, ձախ էսէռների կուսակցության Կենտկոմի անդամ Պ. Պռոշյանը, դաշնակցության կուսակցության ներկայացուցիչ Ս. Զորյանը (Ռոստոմ)։ Այդ հանձնաժողովը կազմեց ինչպես Արևմտյան Հայաստանի մասին զեկուցագիրը, այնպես էլ դեկրետի նախագիծը, որի վերջնական տեքստը՝ խմբագրված Վ. Տերյանի կողմից, ներկայացվեց ժողկոմսովետի քննարկմանը[13]։

«Թուրքահայաստանի մասին» դեկրետի վերլուծությունը և նրա մշակման ընթացքի հետ ծանոթությունը կասկած չեն թողնում այն մասին, որ դեկրետի ընդունման պահին սովետական կառավարությունը նպատակահարմար էր համարում երկու Հայաստանների ժամանակավոր գոյությունը՝ արևելյան և արևմտյան։ Ի դեպ հայտնի է, որ 1917 թ. փետրվարից հետո Հայաստանի ապագայի մասին իր ելույթներում Վ. Ի. Լենինը նշում էր ամբողջ Հայաստանի համար անկախ հանրապետություն ստեղծելու անհրաժեշտությունը։ Այսպես, Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին Վ. Ի. Լենինն անդրադառնալով ազգերի ինքնորոշմանը, ասել է. «Մենք պարտավոր ենք իսկույն ևթ բավարարել ուկրաինացիների և ֆինլանդացիների պահանջները, ապահովել նրանց, ինչպես և բոլոր այլացեղերին Ռուսաստանում, լիակատար ազատությունը, ընդհուպ մինչև անջատվելու ազատությունը, այդ նույնը կիրառել ամբողջ Հայաստանի նկատմամբ...»[14]։ Վ. Տերյանը վկայում է, որ դեկրետի ընդունման հարցի մասին հեղափոխության առաջնորդի հետ զրույցների ժամանակ Վ. Ի. Լենինը նորից արտահայտվում էր հօգուտ ամբողջ Հայաստանի ինքնորոշման, իսկ դեկրետի սկզբնական նախագիծը կոչվում էր «Դեկրետ Հայաստանի մասին»։ Բայց փաստաթղթի վերջնական տեքստը վերնագրված է «Դեկրետ Թուրքահայաստանի մասին»։ Դա բացատրվում է նրանով, որ թեկուզ և ժամանակավորապես երկու Հայաստանների գոյության ճանաչումն առավել լրիվ էր համապատասխանում Սովետական Ռուսաստանի ազգային քաղաքականության հիմնական սկզբունքին՝ ճանաչելու ազգերի իրավունքը՝ վճռելու իրենց ճակատագիրը, ինքնորոշման իրավունքի իրականացումը։ Այդ սկզբունքի պահպանմամբ էր պայմանավորված նաև դեկրետի տեքստի մեջ «Թուրքահայաստանի» սահմաններից զորքերի դուրսբերման մասին կետը։ Վ. Տերյանը նշել է, որ երկու Հայաստանների ժամանակավոր պահպանման մասին տեսակետը բաժանում էր հայ կոմունիստների մեծամասնությունը։ Կարևոր է ընդգծել, որ բոլշևիկները երկու Հայաստանների գոյությունը համարում էին ժամանակավոր երևույթ, հուսալով ապագայում ստեղծել միասնական հայկական սոցիալիստական հանրապետություն։ Այսպիսով, «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, անկախ իրադարձությունների հետագա զարգացումից, իր ընդունման պահին վերաբերում էր միայն Արևմտյան («Թուրքական») Հայաստանին, և մեզ սխալ է թվում այն կարծիքը, որ իբր այդ դեկրետը վերաբերում էր ամբողջ Հայաստանին և նույնիսկ ավելին՝ հանդիսացավ Հայկական ՍՍՀ ստեղծման ճանապարհին առաջին քայլը[15]։ Այստեղ հարկ է հիշել նաև այն մասին, որ արևելահայերին ինքնորոշման իրավունք էր տրվել դրանից առաջ՝ 1917 թ. նոյեմբերի 2-ին, «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայով»։

Հայկական սովետական պետականության ստեղծումը Հայաստանում սովետական իշխանության հաստատման կարևորագույն արդյունքներից է։ Հայկական սովետական պատմագիտության մեջ ճիշտ տեսակետ է հաստատվել

---

13 Լ. Ա. Խուրշուդյան, նշվ. աշխ., էջ 24։
14 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 34, էջ 295։
15 А. Н. Мнацаканян, նշվ. աշխ., էջ 118։

հայկական սովետական պետականության ձևավորման պրոցեսի ժամանակագրական շրջանակների մասին. սովետական իշխանության հաղթանակի պահից (1920 թ. նոյեմբեր) և մինչև Հայաստանի սովետների I համագումարը (1922 թ. փետրվար), որը հաստատելով Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության առաջին սահմանադրությունը, օրենսդրորեն ամրապնդեց հայ ժողովրդի նոր պետականության կազմավորումը։

Հայկական սովետական պետականության ձևավորման հիմնական փուլերը այս կամ այն չափով լուսաբանված են Հայաստանում սովետական իշխանության հաստատմանը, ժողովրդական տնտեսության վերականգնմանը, սովետական իշխանության առաջին տարիներին հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը և այլնին նվիրված աշխատությունների բացարձակ մեծամասնության մեջ։ Կանգ չառնելով այդ աշխատությունների վրա, որոնց հեղինակները հաճախ կրկնում են մեկը մյուսին, նշենք, որ հայկական սովետական պետականության ձևավորման պրոցեսն առավել լիակատար լուսաբանված է Ա. Էլչիբեկյանի[16] և Ս. Խարմանդարյանի[17] աշխատություններում։

Ա. Էլչիբեկյանի «Ռևկոմներից դեպի սովետներ (սովետների կազմավորումը Հայաստանում)» աշխատության մեջ քննվում է հայկական սովետական պետականության ստեղծումը, բացահայտվում են այդ պրոցեսի առանձնահատկությունները։ Հայտնի է, որ Փետրվարյան հեղափոխությունից հետո Հայաստանի որոշ քաղաքներում առաջացան բանվորների և զինվորների դեպուտատների սովետներ։ Չնայած դրանցում դաշնակցականների, էսէռների և մենշևիկների գերակշռությանը, սովետները պրոլետարիատի դիկտատուրայի մարմիններ էին։ Սակայն հայկական բուրժուական հանրապետության կազմավորմամբ (1918 թ. մայիս) Հայաստանում սովետները դադարեցին դոյություն ունենալուց։ Հայաստանում սովետները կրկին ստեղծվեցին ընտրական ուղով՝ երկրում սովետական իշխանության հաղթանակից մեկ տարի հետո՝ 1921 թ. դեկտեմբերին։ Այդ տարվա ընթացքում իշխանությունը լիովին գտնվում էր Հայաստանի Հեղկոմի ձեռքում, որն իրագործում էր պետական բարձրագույն իշխանությունը. տեղերում՝ գավառներում, տեղամասերում և գյուղերում գոյություն ունեին տեղական հեղկոմներ, որոնց նշանակում էին վերադաս կուսակցական մարմինները, երբեմն էլ զինվորական հրամանատարությունը։ Այդ ժամանակաշրջանում Սովետական Հայաստանի պետական կառավարման առանձնահատկությունն այն էր, որ հանրապետության ժողկոմսովետը փաստորեն կազմակերպչորեն ձուլված էր Հայաստանի Հեղկոմի հետ, Հեղկոմի անդամները համարվում էին ժողովրդական կոմիսարներ։ Նշենք նաև, որ հեղկոմները ևս Հայաստանում կազմավորվել են երկու անգամ։ Նախքան սովետական իշխանության հաղթանակը, երբ նրանք ծառայում էին որպես սովետական իշխանության հաստատման համար պայքարի մարմիններ, ինչպես էր, օրինակ, 1920 թ. Մայիսյան ապստամբության ժամանակաշրջանում և սովետական իշխանության հաստատումից հետո, երբ հեղկոմները հանդես էին գալիս իբրև պրոլետարիատի դիկտատուրայի մարմիններ։ Ա. Էլչիբեկյանի աշխատության մեջ ցույց է տրվում, որ հենց հեղկոմների վրա էր ընկած Հայաստանում առաջին սոցիալիստական վերափոխումների իրագործման, սովետական իշխանության ամրապնդման հիմնական ծանրությունը։ 1921 թ. գարնանը դաշնակցականների հակասովետական խռովության վերացումից հետո հանրապետության տեղական հեղկոմների աշխատանքը դարձավ բազմաբնույթ, ստիպելով ընդգրկելով Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքի բոլոր կողմերը։ Զգալի աշխատանք կատարելով սովետական իշխանության ամրապնդման, նրա շուրջը աշխատա-

---

16 А. М. Эльчибекян, От ревкомов к Советам, Ереван, 1978.

17 С. В. Хармандарян, Ленин и становление Закавказской федерации, 1921—1923, Ереван, 1969.

վորության համախմբման, ժողովրդական տնտեսության վերականգնման առաջին միջոցառումների իրականացման ուղղությամբ, հեղկոմները դրանով իսկ պայմաններ ստեղծեցին իշխանությունն ընտրովի սովետներին փոխանցելու համար։ 1921 թ. դեկտեմբերին—1922 թ. հունվարին հանրապետությունում տեղի ունեցան բոլոր աստիճանների սովետների ընտրություններ, անցկացվեցին սովետների տեղամասային և գավառային համագումարներ։ Ընտրությունների շնորհիվ Հայաստանում ստեղծվեցին 2 քաղսովետներ (Երևանի ու Ալեքսանդրապոլի), 10 գավառային գործադիր կոմիտեներ և 895 գյուղսովետներ[18]։

Իշխանությունը սովետներին հանձնելն ավարտվեց Հայաստանի սովետների I համագումարի գումարումով (1922 թ. հունվարի 30—փետրվարի 4), որն ընդունեց Սովետական Հայաստանի առաջին սահմանադրությունը, ընտրեց Կենտգործկոմ և կազմավորեց հանրապետության կառավարությունը՝ Ժողկոմսովետը։ Հայաստանի սովետների I համագումարի որոշումները նշանավորում են հայկական սովետական պետականության ստեղծման ավարտը։

Ս. Խարմանգարյանի մենագրության մեջ, որի ընդհանուր բնութագրմանը մենք դեռ կանդրադառնանք, Հայաստանում ազգային-պետական շինարարությունը դիտարկվում է հարևան սովետական հանրապետություններում՝ Վրաստանում և Ադրբեջանում, տեղի ունեցած իրադարձությունների հետ սերտ կապի մեջ, որը թույլ է տալիս բացահայտել ինչպես Անդրկովկասի համար ընդհանուր սովետական պետական շինարարության օրինաչափությունները, այնպես էլ այն յուրահատկությունները, որոնք հատուկ են այդ հանրապետություններից յուրաքանչյուրին առանձին վերցրած։ Օգտագործելով հարուստ արխիվային նյութեր, հեղինակը ցույց է տվել երիտասարդ Սովետական Հայաստանի ձևավորման դժվարությունները, հանրապետության ղեկավարության որոնումները՝ գտնելու Հայաստանում սովետական իշխանության առաջ կանգնած սոցիալ-տնտեսական ու քաղաքական բարդ խնդիրները լուծելու լավագույն ուղիներ։ Ընդհանուր լարված իրադրությունը խորանում էր ներքին քաղաքականության հարցերում կուսակցական ղեկավարության և Հայաստանի հեղկոմի անդամների միասնության բացակայության հետևանքով։ Նման իրավիճակն առաջ էր բերում ՌԿ(բ)Կ Կենտրոնական և Կովկասյան երկրային կոմիտեների լուրջ մտահոգությունը։ Միջոցառումներ ձեռնարկվեցին հանրապետությունում մթնոլորտի առողջացման և Հայաստանի կուսակցական ու պետական մարմինների ամրապնդման ուղղությամբ։ 1921 թ. մարտին ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոն որոշում ընդունեց Հայաստանի Հեղկոմի կազմի մեջ մտցնել Ա. Մյասնիկյանին և Ս. Լուկաշինին. հանրապետությունում աշխատանքի ուղարկվեցին կուսակցության այլ ղեկավար գործիչներ ևս։ Շուտով, Հայաստան գալուց հետո, Ա. Մյասնիկյանը հաստատվեց Հեղկոմի նախագահ, իսկ Ս. Լուկաշինը՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար։ Հայտնի է, որ ներքին քաղաքականության հարցերի մասին տարաձայնություններ ու անհամաձայնություն գոյություն ունեին նաև Ադրբեջանի ղեկավար գործիչների մեջ։ Այդ իրադարձությունների լույսի տակ պարզ են դառնում այն պատճառները, որոնք Վ. Ի. Լենինին դրդեցին 1921 թ. ապրիլի 14-ին հայտնի նամակով դիմելու Կովկասի կոմունիստներին։ Խորությամբ ներթափանցելով Անդրկովկասի հանրապետություններում առաջացած իրադրության էության մեջ, Վ. Ի. Լենինը երկրամասի կոմունիստներին խորհուրդ էր տալիս հասկանալ իրենց հանրապետությունների դրության յուրօրինակությունը, հասկանալ «մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[19]։

---

18 А. М. Эльчибекян, նշվ. աշխ., էջ 128։

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 402։

Անդրկովկասի հանրապետություններում սովետական պետական շինարարության կարևոր բնագավառը հին, բուրժուական պետական մեքենայի ջարդումն էր, սովետական իշխանության նոր ապարատի ստեղծումը, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի տարածքային սահմանազատումը։ Այդ խնդիրները ևս քննվում են Ս. Խաչմանդարյանի մենագրության մեջ. հատկապես նշենք, որ հեղինակը մեր պատմագիտության մեջ առաջինը հանգամանորեն լուսաբանել է Անդրկովկասի հանրապետությունների կուսակցական ղեկավար գործիչների մասնակցությամբ ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյում անդրկովկասյան հանրապետությունների տարածքային սահմանազատման հարցի քննարկումն ու համապատասխան որոշում ընդունելը։ Դա բարդ և դժվարին հարց էր և անցյալում ազգամիջյան թշնամանքի ու անբարյացակամության աղբյուր։

Անդրկովկասի ժողովուրդների սովետական պետականության ստեղծման ու ամրապնդման գործում Վ. Ի. Լենինի դերի բացահայտմանն է նվիրված Ս. Աղայանի մենագրությունը[20]։ Հարցը դիտարկելով ժամանակագրական լայն շրջանակներում, ցույց տալով այն մեծ նշանակությունը, որ Անդրկովկասում ունեցել է ազգային հարցը սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարի ընթացքում, հեղինակը լուսաբանել է երկրամասի կոմունիստների վերաբերմունքն ազգային-պետական կառուցվածքի հարցերի նկատմամբ, ապագա պետականության առավել ճիշտ ձևերի նրանց որոնումները, այդ հարցում մոլորությունների հաղթահարումը, որի շնորհիվ ինքնուրույն սովետական հանրապետությունների ստեղծման կուրս վերցվեց։ Հենվելով Վ. Ի. Լենինի տեսական ժառանգության վրա, հեղինակը բացահայտել է աշխարհում առաջին սոցիալիստական պետության դերն Անդրկովկասի սովետական հանրապետությունների կազմավորման, ժողովուրդների միջև եղբայրության և բարեկամության հաստատման գործում, ցույց է տվել, որ Անդրֆեդերացիայի և ապա ՍՍՀՄ կազմավորումը կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության օրինաչափ հետևանքն էր, մեր երկրում ազգային-պետական շինարարության կարևոր փուլը։

Սովետահայ պատմագիտության մեջ նշանակալի ուշադրություն է դարձվել Անդրկովկասում ազգային խաղաղության հաստատման և ազգային հարցի լուծման պատմությանը։ Մասնավորապես նշենք Գ. Գալոյանի[21] և Ի. Թամրազովայի[22] հետազոտությունները։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Անդրկովկասում ազգային հարցի լուծմանն է նվիրված Գ. Գալոյանի նշված աշխատության երկրորդ մասը։ Նախորդ մասում քննելով դարասկզբից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունն Անդրկովկասում բանվորական շարժումն ու ազգային հարցը, հեղինակը ցույց է տվել այն մեծ տեղը, որ գրավել է ազգային հարցը հեղափոխական շարժման, երկրամասի բոլոր քաղաքական կուսակցությունների գործունեության մեջ, կուսակցություններ, որոնք ձգտում էին իրենց նպատակներին ծառայեցնել Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը։ Պրոբլեմի նման լայն ընդգրկումը հեղինակին թույլ է տվել համողիչ ցույց տալ Անդրկովկասի ժողովուրդների կյանքում ազգային հարցի դերն ու տեղը, կոմունիստական կուսակցության ու սովետական իշխանության կողմից այդ հարցի լուծման պատմական նշանակությունը։ Գ. Գալոյանը հետազոտել է երկրամասում ազգայնական կուսակցությունների տիրապետության տարիներին ազգային հարցի ծայրահեղ սրումը, հանգամանորեն լուսաբանել է

---

[20] Ц. П. Агаян, В. И. Ленин и создание закавказских советских республик, Ереван, 1976.

[21] Г. А. Галоян, Рабочее движение и национальный вопрос в Закавказье, 1900—1922, Ереван, 1969.

[22] И. И. Тамразова, Деятельность коммунистических организаций по интернациональному сплочению народов Закавказья, Ереван, 1972.

Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական իշխանության հաստատման ժամանակաշրջանում Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը, երկրամասում ազգային խաղաղության հաստատման նպատակով Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների ջանքերը և երկրամասի ժողովուրդների ֆեդերատիվ միավորման նախապատրաստման նպատակով կատարած մեծ աշխատանքը։ Գ. Գալոյանի աշխատության տարբերիչ գիծը լայն պատմական կտավի վրա պրոբլեմի քննությունն է. բացահայտված են ոչ միայն Ռուսաստանի հեղափոխական ընդհանուր պրոցեսում Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման տեղը, այլև այն նշանակությունը, որ Անդրկովկասում ազգային հարցին տալիս էին միջազգային իմպերիալիզմի ուժերը, որոնք ձգտում էին երկրամասի ազգայնական շրջաններին օգտագործել իրենց զավթողական պլանների իրագործման և սոցիալիստական հեղափոխության դեմ պայքարի նպատակով։ Այդ կապակցությամբ հեղինակը զգալի ուշադրություն է դարձրել բուրժուական, գերազանցապես 1950—1960-ական թվականների ամերիկյան պատմագիտության քննադատությանը, որը շարունակում է կեղծել Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի քաղաքականության առանցքային մոմենտները, երկրամասի ժողովուրդների պետականության ձևավորումն ու զարգացման պատմությունը։

Ի. Թամրազովայի աշխատության մեջ լուսաբանվել է 1920-ական թվականներին ազգային հարցի լուծման և երկրամասի ժողովուրդների համախմբման ուղղությամբ Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների գործունեությունը։ Հեղինակի համար Անդրֆեդերացիայի կազմավորումը նշված բնագավառում Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պլանաչափ գործունեության ելակետային բնագիծ է։ Աշխատության մեջ ցույց է տրվել երկրամասի հակահեղափոխական ազգայնական կուսակցությունների կրախը, կուսակցություններ, որոնք կորցնելով իրենց սոցիալական հողը, 1920-ական թվականներին Անդրկովկասում ինքնալիկվիդացվեցին։ Ի. Թամրազովան զգալի ուշադրություն է նվիրել երկրամասի տնտեսական և կուլտուրական մակարդակի բարձրացման ուղղությամբ կատարված կարևոր աշխատանքին, որն Անդրկովկասում ազգային հարցի լուծման բաղկացուցիչ մասն է։

Ա. Մնացականյանի «Լենինը և ազգային հարցի լուծումը ՍՍՀՄ-ում» հիշյալ աշխատության մեջ պրոբլեմը նշանակալիորեն լայն է դրված. հեղինակն աշխատել է ընդհանրացնել բոլոր ազգային հանրապետությունների ազգային-պետական շինարարության փորձը, ուշադրություն դարձնելով երկրի տարբեր շրջաններում սովետական պետականության ձևավորման հարցերին։ Բացի այդ, նա լուսաբանել է պրոբլեմի այնպիսի տեսանկյունները, որոնք առաջ չեն քննվել սովետական պատմագիտության մեջ. դրանք են՝ ազգային քաղաքականությունը կուսակցական շինարարության մեջ, ազգային քաղաքականությունը ռազմական շինարարության մեջ և այլն։

Անդրֆեդերացիայի ստեղծման պատմությունը, նրա դերը երկրամասի ինտերնացիոնալ համախմբման, ազգային հարցի լուծման և Անդրկովկասի հանրապետությունների տնտեսական ու մշակութային վերելքի ապահովման գործում լուսաբանվել են ազգային-պետական շինարարությանը, անցման շրջանում հանրապետության պատմությանը նվիրված բոլոր հետազոտություններում, ինչպես նաև, ամենարնդհանուր գծերով, Սովետական Հայաստանի և ՀԿԿ-ի պատմությանը նվիրված ընդհանրացնող աշխատություններում[23]։ Անդրֆեդերացիայի ստեղծման գործում Վ. Ի. Լենինի դերը լուսաբանվել է Վ. Պարսամյանի աշխատությունում[24], ինչպես նաև Գ. Ղարիբջանյանի

---

23 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, Երևան, 1967, «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967։

24 Վ. Ա. Պարսամյան, Վ. Ի. Լենինը և Անդրկովկասյան ֆեդերացիան, Երևան, 1962։

մենագրությունում[25], որում քննվում է հեղափոխության առաջնորդի ղեկավար դերն Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման ու ամրապնդման, նրանց կողմից սովետական իշխանության համար պայքարի, Անդրկովկասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու մշակութային վերելքի ղեկավարման գործում։

Անդրֆեդերացիայի ստեղծման պատմությունն առավել լիակատար է լուսաբանվել Ս. Խարմանդարյանի «Լենինը և Անդրկովկասյան ֆեդերացիայի ձևավորումը. 1921—1923» հիշյալ մենագրության մեջ։ Հեղինակը հաջողությամբ է բացահայտել Վ. Ի. Լենինի դերը կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության մշակման ու իրականացման, սովետական ազգային-պետական շինարարության հիմքերի մշակման, Անդրֆեդերացիայի ստեղծման և ՍՍՀՄ կազմավորման գործում։ Իր աշխատության մեջ հմտորեն օգտվելով փաստական նյութից, հեղինակը համարյա սպառիչ լուսաբանել է հետազոտվող պրոբլեմի կարևորագույն հարցերը. Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների գործունեությունը՝ սոցիալիստական շինարարության ընթացքում երկրամասի տեղական պայմանների և առանձնահատկությունների հաշվառման մասին Վ. Ի. Լենինի խորհուրդների իրականացման ուղղությամբ, Անդրկովկասում ազգային-պետական շինարարության հիմնական փուլերը, որոնք ավարտվեցին ֆեդերացիայի կազմավորմամբ, ՍՍՀՄ կազմավորման նախապատրաստումը և այդ հարցի շուրջ պայքարը երկրամասում։ Հեղինակը ցույց է տվել, որ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հետևողական աշխատանքն ապահովեց միութենական սոցիալիստական պետության ստեղծման լենինյան գաղափարների հաղթանակը և հանգեցրեց երկրամասում նացիոնալ-ուկլոնիստների լիակատար պարտությանը։ Հետազոտության անբեկանելի արժանիքն է հեղինակի քննադատական մոտեցումը սկզբնաղբյուրների և պատմակուսակցական գրականության նկատմամբ, որի շնորհիվ նրան հաջողվել է կատարել էական ճշտումներ ու լրացումներ, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ չափով հիմնավորված է։ Չնայած Ս. Խարմանդարյանը հետազոտել է Անդրֆեդերացիայի լոկ սկզբնական՝ ձևավորման փուլը, սակայն պրոբլեմի վերլուծությունը նրան հնարավորություն է տվել ճիշտ եզրակացություն անել Անդրֆեդերացիայի պատմական նշանակության մասին. այն կայանում է նրանում, որ ֆեդերացիան ազգային խաղաղության, տնտեսական վերածննդի և տնտեսական առաջընթացի գործուն մարմին էր, երկրամասում սովետական իշխանության ամրապնդման և սոցիալիզմի կառուցման կարևորագույն միջոց։

Ազգային-պետական շինարարության մասին սովետահայ պատմագիտության մեր ասելիքը հարկ է ավարտել Հայաստանի սովետների համագումարներին նվիրված՝ Ս. Խարմանդարյանի և Կ. Խուդավերդյանի աշխատության հիշատակությամբ[26]։ Դա սովետահայ պատմագիտության մեջ առայժմ միակ աշխատությունն է՝ նվիրված սոցիալիստական շինարարության փուլում պետական իշխանության բարձրագույն մարմնի գործունեության լուսաբանմանը։ Ժամանակագրորեն այն ընդգրկում է 1922 թ. (երբ տեղի ունեցավ Հայաստանի սովետների I համագումարը) մինչև 1937 թ. (երբ հանրապետության սովետների X, վերջին, համագումարն ընդունեց ՀՍՍՀ երկրորդ սահմանադրությունը) ժամանակաշրջանը, որից հետո, ինչպես հայտնի է, հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը դարձավ ՀՍՍՀ Գերագույն սովետը։ Գիտաաղբյուրագիտական բնույթ ունեցող այդ աշխատության մեջ Հայաստանի սովետների յուրաքանչյուր համագումարի աշխատանքը և որոշումները քննվել են սոցիալիստական շինարարության լայն

---

25 Г. Г. Гарибджанян, В. И. Ленин и большевистские организации Закавказья, Ереван, 1967.

26 С. В. Харманд арян, К. С. Худавердян, Съезды Советов Армении (1922—1937), Ереван, 1963.

կտավի վրա, բացահայտվել է սովետների դերը հանրապետության սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման գործում։

Այսպիսով, սովետահայ պատմագիտության մեջ ազգային- պետական շինարարության պատմության հարցերը զգալիորեն լուսաբանվել են։ Դրա հետ մեկտեղ, այդ ասպարեզում կան բացեր, որոնց վերացումը սովետահայ պատմաբանների կարևոր խնդիրներից է։ Հետազոտման կարիք ունեցող հարցերից նշելի են հետևյալները. հանրապետությունում պետական շինարարության ամբողջական պատմությունը՝ սկսած սովետական իշխանության հաստատումից, վերջացրած սոցիալիզմի ժամանակաշրջանով (բացահայտելով այդ պրոցեսի ընդհանուր օրինաչափություններն ու առանձնահատկությունները), ՀՍՍՀ սահմանադրական զարգացումը (պատմական տեսանկյունով), բոլոր աստիճանի սովետների գործունեության հետազոտումը (ցույց տալով նրանց դերը սոցիալիստական շինարարության և հանրապետության տոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացման գործում, Հայրենական մեծ պատերազմի պայմաններում, աճած դերը հասուն սոցիալիզմի ժամանակաշրջանում և այլն)։ Ազգային-պետական շինարարության պրոբլեմի խորացված հետազոտությունը թույլ կտա ավելի լիակատար պատկերել սովետական հասարակության զարգացման օրինաչափությունները։

ПРОБЛЕМА ИСТОРИИ НАЦИОНАЛЬНО-ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА В СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

КОНСТАНТИН ХУДАВЕРДЯН, ЛЕНДРУШ ХУРШУДЯН

Резюме

Советская армянская историография обратила значительное внимание на освещение проблемы истории национально-государственного строительства. При этом изучению подверглись в основном следующие вопросы: декрет Совнаркома Советской России «О Турецкой Армении» и его значение, становление советской армянской государственности, решение национального вопроса и установление национального мира в Закавказье, образование ЗСФСР и Союза ССР, деятельность Советов и др. Вместе с тем в этой области имеются вопросы, которые нуждаются в исследовании. К числу их могут быть отнесены: целостная история государственного строительства в республике, начиная с установления Советской власти и до периода зрелого социализма,—с раскрытием общих закономерностей и особенностей этого процесса; конституционное развитие Армянской ССР—в историческом аспекте; исследование деятельности Советов всех ступеней—с показом их роли в социалистическом строительстве, обеспечении социально-экономического и культурного развития республики и т. д. Углубленное исследование проблем истории национально-государственного строительства позволит полнее представить закономерности развития советского общества.